ISSN 2579-2504

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY
SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ
НАУЧНЫЙ ВЕСТНИК

ԵՐԵՎԱՆ 2023, № 1 (12)

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2023.6.1.068

SPECIFICS OF THE TRINITARIAN PRINCIPLE IN SOME MODERN THEORIES OF PSYCHOTHERAPY (IN THE CONTEXT OF TRANSCENDENTAL PSYCHOLOGY)

Yesayan G. S. (Armenian State Pedagogical University),
g.s.yesayan@mail.ru

Received: 14.03.2023

Revised: 02.05.2023

Accepted: 05.05.2023

The principle of trinitarity is one of the fundamental principles of transcendental psychology, implementing the structural and functional features of this approach. Based on the analysis of the manifestations of “nothing” into “something”, an attempt was made to prove the need for the presence in the dyad of anisotropic elements of the mental process of the third component, without which it is impossible to imagine the generation of the perception process (as well as any mental process), thus supplementing the transcendental principle formation of anisotropic ratios. An important role in this triad is played by homogeneity, which includes two anisotropic sides.

When describing the structure and processes of the psyche, many theories of psychotherapy follow the trinitarian principle, in particular, behaviorism, in which the author (B. Skinner) believed that in order to understand and correct human behavior, it is enough to deal (work) only with anisotropic sides (stimulus-response), ignoring the third party between them - the side ("black box"). However, as the history of the development of psychology has shown, replacing the dual model of behavior with a trinitarian one that takes into account the content of the "black box" significantly increases the possibilities of describing, explaining and regulating human behavior. E. Bern's transactional analysis is characterized by the presence of three ego states: Parent, Child and Adult. Each ego state represents a special pattern of thinking, feeling and behavior. In analytical psychology K.G. Jung argues that the soul is made up of three separate but interacting structures: The Ego, the Personal Unconscious, and the Collective Unconscious. In psychoanalysis, Z. Freud first applied a topographic model of personality. According to this model, three levels can be distinguished in mental life: consciousness,

preconscious and unconscious. In the early 1920s, Freud revised his topographical model of mental life and introduced three main structures into the anatomy of personality: It (Id), I (Ego), and Super-I (Super-Ego). The given trinitarian model of personality is an effective "working" system that regulates emotions and behavior of a person.

Key words: *anisotropic relations, psychotherapy, transcendental psychology, trinitarian principle, homogeneity.*

ОСОБЕННОСТИ ТРИНИТАРНОГО ПРИНЦИПА НЕКОТОРЫХ СОВРЕМЕННЫХ ТЕОРИЯХ ПСИХОТЕРАПИИ (В КОНТЕКСТЕ ТРАНСЦЕНДЕНТАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ)

Есаян Г. С. (Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереван, Армения)

Принцип тринитарности является одним из фундаментальных принципов трансцендентальной психологии, воплощая собой структурные и функциональные особенности этого подхода. На основании анализа проявлений «ничто» в «нечто» осуществлена попытка доказать необходимость наличия в диаде анизотропных элементов психического процесса третьего компонента, без которого невозможно представить порождение процесса восприятия (как, впрочем, и любого психического процесса), дополнив, таким образом, трансцендентальный принцип образования анизотропных отношений. Важную роль в этой триаде играет гомогенность, в которую включены две анизотропные отношения.

При описании структуры и процессов психики многие теории психотерапии следуют тринитарному принципу, в частности – бихевиоризм, в котором автор (Б. Скиннер) считал, что для понимания и коррекции поведения человека достаточно иметь дело (работать) лишь с анизотропными отношениями (стимул-реакция), игнорируя находящуюся между ними третьий компонент («черный ящик»). Однако, как показала история развития психологии, замена дуальной модели поведения тринитарной, учитывающей содержание «черного ящика», значительно увеличивает возможности описания, объяснения и регуляции поведения человека. В трансактном анализе Э. Берна характеризуется наличием трёх эго-состояний: Родитель, Ребёнок и Взрослый. Каждое эго-состояние представляет собой особый паттерн мышления, чувств и поведения. В аналитической психологии К.Г. Юнг утверждает, что душа состоит из трех отдельных, но взаимодействующих структур: Эго, Личного бессознательного и Коллективного бессознательного. В психоанализе З. Фрейд сначала

применял топографическую модель личности. Согласно этой модели, в психической жизни можно выделить три уровня: Сознание, Предсознательное и Бессознательное. В начале 1920-х годов Фрейд пересмотрел свою топографическую модель психической жизни и ввел в анатомию личности три основные структуры: Оно (Ид), Я (Эго), и Сверх-Я (Супер-Эго). Приведенная тринитарная модель личности представляет собой эффективную «работающую» систему, регулирующую эмоции и поведение человека.

Ключевые слова: *анизотропные отношения, психотерапия, трансцендентальная психология, принцип тринитарности, гомогенность.*

ՏՐԻՆԻՏԱՐ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՈՐՈՇ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

Եսայան Գ.Ս. (Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

Տրինիտար սկզբունքը հանդիսանում է տրանսցենդենտալ հոգեբանության հիմնարար սկզբունքներից մեկը՝ մարմնավորելով այդ մոտեցման կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները: «Ինչ-որ բանում» «Ոչինչի» դրսևորումների վերլուծության հիման վրա իրականացվել է հոգեկան գործընթացում անիզոտրոպ տարրերից (դիադայից) բացի երրորդ բաղադրիչ մասի անհրաժեշտության հաստատման փորձը, առանց որի անհնար է պատկերացնել ընկալման ծագման գործընթացը (ինչպես նաև հոգեկան ցանկացած գործընթացի): Այդ կերպ լրացվել է անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման տրանսցենդենտալ սկզբունքը: Այդ տրիադայում կարևոր դեր է խաղում հոմոգենությունը, որում ներառված են երկու անիզոտրոպ հարաբերություններ:

Հոգեկանի կառուցվածքը և գործընթացները նկարագրելիս հոգեթերապևտիկ շատ տեսություններ հետևում են տրինիտար սկզբունքին, մասնավորապես՝ բիհեվիորիզմը, որում հեղինակը (Բ. Սկիներ) գտնում էր, որ մարդու վարքը հասկանալու և շտկելու համար բավարար է գործ ունենալ (աշխատել) միմյանց նկատմամբ անիզոտրոպ հարաբերությունների հետ (ազդակ-հակազդում), անտեսելով նրանց միջև գոյություն ունեցող երրորդ բաղկացուցիչ մասը («սև արկղ»): Սակայն, ինչպես ցույց տվեց հոգեբանության զարգացման պատմությունը, վարքի դուալ մոդելին փոխարինած տրինիտար մոդելը, որը հաշվի էր առնում «սև

արկղում» առկա բովանդակությունը, նշանակալիորեն մեծացրեց մարդու վարքի նկարագրության հնարավորությունները, դրա շտկումը և մեկնաբանությունները: Է. Բերնի տրանսակցիոն վերլուծությունը բնորոշվում է երեք էգո-վիճակների առկայությամբ. Ծնող, Երեխա և Մեծահասակ: Ամեն էգո-վիճակ իրենից ներկայացնում է մտածողության, զգացումների և վարքի առանձնահատուկ պատտերն: Անալիտիկ հոգեբանությունում Կ.Գ. Յունգը պնդում է, որ հոգեկանը բաղկացած է երեք առանձին, սակայն միմյանց հետ փոխգործակցող կառուցվածքներից. Էգոյից, Անհատական անգիտակցականից և Կոլեկտիվ անգիտակցականից: Հոգեվերլուծությունում Զ. Ֆրեյդը սկզբից կիրառում էր անձի տոպոգրաֆիկ մոդելը: Համաձայն այդ մոդելի, հոգեկան կյանքում կարելի է առանձնացնել երեք մակարդակներ. Գիտակցական, Ենթագիտակցական և Անգիտակցական: 1920թ. սկսած Զ. Ֆրեյդը վերանայեց հոգեկան կյանքի իր տոպոգրոֆիկ մոդելը և անձի անատոմիայում ներմուծեց երեք հիմնական կառուցվածքները. Այն (Իդ), Ես (Էգո) և Գեր-Ես (Գեր-Էգո): Անձի բերված տրինիտար մոդելը իրենից ներկայացնում է արդյունավետ «գործող» համակարգ, ինչի շնորհիվ հնարավոր է լինում կարգավորել մարդու էմոցիաները և վարքը:

Հանգուցային բառեր՝ *անիզոտրոպ հարաբերություններ, հոգեթերապիա, տրանսցենդենտալ հոգեբանություն, տրինիտար սկզբունք, հոմոգենություն:*

Գիտական հեղափոխությունների համար օրինաչափ են որոշ պայմաններ, որում կարող ենք գտնել տրամաբանական հաջորդականություն և այն դիտարկել երեք իրար հետ փոխկապակցված երեք փուլերի միջոցով. 1) գիտական որևիցե ուղղության շրջանակներում կատարվող հետազոտությունները չեն տալիս սպասված բավարար արդյունքներ, 2) առաջ եկած «չլուծվող» նոր խնդիրները լուծելու համար ստեղծվում են հասկացությունների այլ համակարգ, ինչը թույլ կտա նոր հայացքով մեկնաբանել ծագած խնդիրները և 3) ստեղծված հասկացությունների նոր համակարգը, լինելով համապարփակ, այն աստիճան է իր ազդեցությունը ծավալում, որ թույլ է տալիս տվյալ գիտական դիսցիպլինայում (և ոչ միայն), այլ խնդիրներ և երևույթներ ևս նորովի բացատրել ու մեկնաբանել:

Այս երեք փուլերը նկատելի են նաև տրանսցենդենտալ հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացի ժամանակ. ա) հոգեբանությունում, մասնավորապես՝ ընկալման գործընթացը ուսումնասիրելիս առաջ եկան խնդիրներ, որոնք հնարավոր չէր բացատրել գոյություն ունեցող հասկացությունների միջոցով: բ) ստեղծվեց հասկացությունների այլ համակարգ, ինչը թույլ տվեց ընկալման գործընթացը նորովի

մեկնաբանել ու հաղթահարել առաջացած խնդիրները, այնուհետև գ) այդ հասկացությունների նոր համակարգի օգնությամբ հնարավորություն ստեղծվեց հոգեբանությունում հետազոտել և մեկնաբանել այլ խնդիրներ ևս: Վերջինը մատնանշում էր տրանսցենդենտալ հոգեբանության ռեսուրսների կիրառման սահմանները, որն այլևս չէր եզրափակվում միայն ընկալման գործընթացն ուսումնասիրելով: Նշվածի մասին են վկայում տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգի հեղինակ՝ Ա.Ի. Միրաքյանի աշակերտների և համախոհների աշխատանքները, մասնավորապես. Վ.Ի. Պանովը էկոհոգեբանության իր հայեցակարգում օգտագործում է աֆիզիկալ մտածելակերպ և տրանսցենդենտալ հոգեբանության այլ հիմնարար սկզբունքներ, ինչը թույլ է տալիս էկոհոգեբանության հայեցակարգում մեկնաբանություններն անելիս ցուցաբերել ոչ արգասիքային մոտեցում:

Էկոհոգեբանությունում իբրև մեթոդաբանական հիմք է հանդիսանում «մարդ – միջավայր (արտաքին, ներքին)» կամ, ավելի լայն համատեքստում վերցված, «հոգեկան ակտիվության սուբյեկտ (մարդ կամ այլ էակ) – շրջակա միջավայր (այդ թվում նաև այն ներկայացնող սուբյեկտները)» համակարգային հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերությունների բաղադրամասերի միջև փոխգործունեության ձևերը: Այս մոտեցման շնորհիվ Վ. Ի. Պանովը ցույց տվեց, որ փոխգործունեության այդպիսի տեսակները կրում են համապարփակ բնույթ և այդպիսով լիովին կիրառելի են մարդու և շրջակա միջավայրի տարբեր տեսակների փոխգործունեությունը վերլուծելու համար [13]:

Տրանսցենդենտալ հոգեբանության ռեսուրսներից օգտվելու և այն լայնացնելու հաջորդ մեծ փորձը պատկանում է Ռ.Մ. Նաղդյանին: Իր աշխատանքները հիմնականում նվիրելով հոգեկան արտացոլման համարժեքության խնդրին, հեղինակը ցուցաբերում է ոչ արգասիքային (աֆիզիկալ) մոտեցում, ինչը թույլ է տալիս մարդու գոյությունը դիտարկել չորս իրականությունների միջոցով. 1) մինչարտացոլման իրականություն, 2) ընկալվող օբյեկտիվ (առարկայական) աշխարհի իրականություն, 3) ներքին պատկերների իրականություն և 4) անգիտակցականի իրականություն [2]: Հեղինակն այսքանով չսահմանափակվելով ավելի առաջ է շարժվում և հիմնավորում, որ տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման համար անհրաժեշտ էր մետաֆիզիկական մոտեցում,ինչը նոր հայացք էր նետում տրանսցենդենտալ հոգեբանությունը հասկանալու համար [10]:

Հոգեբանությունում տրանսցենդենտալ պարադիգմայի ազդեցության սահմանների մեծացման մի յուրօրինակ փորձ կարելի է համարել տրինիտար սկզբունքի օգտագործումը, ինչն ընկած է այս հայեցակարգի

ստեղծման և ձևավորման հիմքում ու հանդիսանում է իբրև բնության (մատերիայի) հիմնարար և համապարփակ սկզբունքներից մեկը: Այն ևս պետք է դիտարկել իբրև մետաֆիզիկական մոտեցման արգասիք:

Անդրադառնալով տրինիտարության հասկացության գիտական մեկնաբանություններին, ասենք որ Ռուսաստանում դրա վերաբերյալ ամենաամբողջական մեկնաբանումները և մշակումը պատկանում է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ռ.Գ. Բարանցևին [12, 31]: Համաձայն այս հեղինակի, տրիադայի մեկնաբանությունները կարելի է բաժանել հետևյալ 3 տարատեսակների.

- Գծային, երբ բոլոր տարրերը դասավորված են սեմանտիկ տարածության միևնույն առանցքի վրա: Օրինակ՝ ձախ-կենտրոն-աջ:
- Անցումային, երբ մի տարրը գտնվում է ավելի բարձր մակարդակի վրա և ապահովում է սինթեզի հնարավորությունը: Դասական օրինակ է հեգելյան բանաձևը. թեզիս-անտիթեզիս-սինթեզ:
- Համակարգային, երբ երեք հավասարազոր տարրերը գտնվում են ընդհանրության միևնույն մակարդակի վրա: Օրինակ՝ հավասարակողմ եռանկյունին [3, 9-11]:

Տրանսցենդենտալ հոգեբանությունում տրիադան չի համընկնում նշվածներից և որևէ մեկին: Այստեղ առկա են երկու հակադիր կողմեր, որոնք ստեղծում են անիզոտրոպ հարաբերություններ և ամփոփվում են մի ամբողջության մեջ: Նշված տրիադայի միջոցով է իրականանում արտացոլման գործընթացը, ինչն իրենից ներկայացնում է օբյեկտների, երևույթների՝ իբրև հոգեկան ֆենոմենների դուրս հանում (ֆիքսում, ստեղծում) [9, 71]: Օրինակ, այդպիսի սկզբունքով է ստեղծված մարդու, կենդանիների կառուցվածքը. երկու ձեռք, երկու աչք (անիզոտրոպ հարաբերություններ) և այլն, որոնք ամփոփված են մարդու, կենդանիների մարմնում՝ իբրև մեկ ամբողջության մեջ:

Այսպիսի տրինիտար կառուցվածքի ձևավորման նախադրյալները անհրաժեշտ է փնտրել տրանսցենդենտալ հոգեբանության փիլիսոփայա-մեթոդաբանական հիմքերում, ինչը մշակվել է Ա. Ի. Միրաքյանի կողմից: Նա առաջարկում էր հոգեկանի ուսումնասիրումը սկսել «Ոչինչ» հասկացության մշակումից, որն արտահայտում է, ինչպես ցանկացած ներկայի բացակայության իրականությունը, այնպես էլ ցանկացած ներկայում բացակայողի իրականությունը [9, 67]: Բացակայողի իրականությունը մենք չենք կարող իմանալ, քանի որ այն անմիջականորեն մեզ տրված չէ, սակայն մենք դրա վերաբերյալ հնարավորություն ունենք ենթադրություններ անել, քանի որ բացակայողի իրականության դրսևորման հետքերը գտնվում են ներկայի իրականության մեջ [9, 68]:

Այսպիսով, «Ոչինչ» -ի հիմնական բնութագիրը կարելի է պատկերացնել տարածա-ժամանակային միատարրության՝ հոմոգենության տեսքով, իբրև ամբողջում տարբերության օբյեկտիվ բացակայություն: Ի տարբերություն «Ոչինչ»-ի, «Ինչ-որ բանի» (ներկայի իրականության) հիմնական բնութագիրը հանդես է գալիս գոյության ձևով, որին բնորոշ է ոչ միատարրությունը՝ անիզոտրոպությունը, իբրև ամբողջում տարբերության օբյեկտիվ ներկայությունը: Այդուհանդերձ, հոմոգենությունը ամբողջության (միասնության) օբյեկտիվ հնարավորությունն է, իսկ անիզոտրոպությունը՝ ամբողջում տարբերության ձևը, գոյության ձևաստեղծման օբյեկտիվ հնարավորությունը [9, 69]:

Այստեղ արդեն ուրվագծվում է տրանսցենդենտալ հոգեբանության տրինիտար համակարգի կառուցվածքը. մի կողմից հոմոգենությունը, որը հանդես է գալիս որպես բացակայողի իրականության հետքերի դրսևորում, իսկ մյուս կողմից՝ հոմոգենությունում (ամբողջում) երկու անիզոտրոպ (տարբերության) հարաբերությունների ստեղծումը, որոնք բնորոշ են ներկայի իրականությանը:

Ա. Ի. Միրաքյանը անիզոտրոպությունը (ամբողջում տարբերությունը) դիտարկում էր որպես բնություն, ինչը փիլիսոփայության պատմությունում բնորոշվում է նաև, որպես մատերիա: Այդուհանդերձ, դա թույլ էր տալիս նրան, որ անիզոտրոպությունը դիտարկեր իբրև մատերիայի օբյեկտիվ գոյություն ունեցող հատկություն, որն ամբողջում հնարավորություն է ստեղծում դրա (մատերիայի) տարբեր ձևերի առաջացման համար [9, 71]:

Այսպիսի տրինիտար մոդելը ոչ միայն ընկած է մատերիայի ստեղծման և զարգացման հիմքում, այլև դրսևորվում է մարդու կառուցվածքում, ինչի ակնառու օրինակներ կարող են ծառայել գլխուղեղի երկու կիսագնդերը, երկու աչք, երկու ձեռք, երկու ականջ և այլն, որոնք անիզոտրոպ են միմյանց նկատմամբ և ամփոփված են մարդու մարմնում՝ իբրև մի ամբողջության մեջ: Ընկալման գործընթացը այս տրինիտար կառուցվածքի շրջանակներում հետազոտելիս բերեցին ցանկալի արդյունքների և հաստատեցին տրանսցենդենտալ հոգեբանության նախնական ենթադրությունները [14]: Սակայն պետք է նշենք, որ նշված հետազոտություններում, հիմնականում ներառված էին և հաշվի էին առնվում երկու կողմերը, որոնց միջոցով ստեղծվում էին անիզոտրոպ հարաբերություններ, իսկ երրորդ «կողմը» (ամբողջը, հոմոգենությունը) գրեթե մնում էր մեկնաբանություններից զերծ: Իհարկե դա ունի իր օբյեկտիվ կողմը, քանի որ, ինչպես նշեցինք, անիզոտրոպությունը գտնվում է ներկայի իրականությունում, որն անմիջականորեն տրված է մեզ, իսկ հոմոգենությունը, ամբողջը՝ բացակայողի իրականությունում, ինչի վերաբերյալ ենթադրությունները մենք կարող ենք անել ներկայում առկա դրա հետքերի

դրսևորումներից: Հոմոգենության դրսևորումները, ի տարբերություն անիզոտրոպության, մեզ տրված են առավել վերացական, ապրիոր հասկացությունների միջոցով, որտեղ կոնկրետ սահմաններ անցկացնելը դժվար է և նույնիսկ անհնար: Օրինակ, եթե մարդու գլխուղեղի երկու կիսագնդերին (որոնք միմյանց նկատմամբ անիզոտրոպ են) հնարավոր է կոնկրետ չափորոշիչներ տալ (ծավալ, ֆունկցիաներ և այլն), ապա այն ամբողջը, ինչում դրանք ամփոփված են, հնարավոր չէ այդ կատեգորիաներով բնութագրել: Այն վերաբերում է նաև մարդու արտացոլման համակարգերին ևս, որոնք իրականանում են մարմնի տարբեր հատվածների միջոցով (որոնք կրկին անիզոտրոպ են միմյանց նկատմամբ). ձեռքեր, լեզու, քթանցքեր և այլն, որոնց գործառույթները հնարավոր է հստակեցնել, սակայն այն ամբողջը, որում դրանք ամփոփված են, դժվար է որոշակիացնել և տալ դրա կոնկրետ սահմանները (քանի որ չենք կարող ցույց տալ այն կետը, թե որտեղ է վերջանում մեկը և սկսում մյուսի սահմանը և կոնկրետ ինչ գործառույթ է կատարում այն):

Ամբողջը՝ մարդու մարմնում հանդես է գալիս իբրև երկու կողմերը, որոնք միմյանց նկատմամբ ունեն անիզոտրոպ հարաբերություններ, իրար միացնող մի շղթա, տարածք, որից սկիզբ են առնում դրանք և հետագայում նաև սնուցվում և գործում, ինչպես որ «Ոչինչ» - ից (հոմոգենությունից) սկիզբ է առնում և հետագայում նաև որոշակիացվում «Ինչ-որ բանը» և դրա գործառույթները:

Ինչպես տեսնում ենք, ինչքան էլ դժվար լինի ամբողջի սահմանները և չափորոշիչները տալը, միևնույն ժամանակ դրա դերը մարդու կառուցվածքում որոշիչ է և առանց դրա հնարավոր չէ պատկերացնել մարդուն ընդհանրապես: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես է այս տրինիտար համակարգը դրսևորվում և գործում հոգեկանում:

Եթե փորձենք շատ հակիրճ այն ներկայացնել, ապա կարող ենք ասել, որ մարդու հոգեկանը հանդիսանում է այն ամբողջականությունը, հոմոգենությունը, որում սկիզբ են առնում և ֆունկցիոնալություն հաղորդում անիզոտրոպ հարաբերություններ ստեղծած տարբեր հոգեկան ֆենոմենները: Ինչպես գիտենք, գիտակցությունը բացահայտում և ճանաչում է երևույթները, առարկաները այնպիսի կատեգորիաների միջոցով, ինչպիսիք են, ասենք, տաք և սառը, հեռուն և մոտիկը, բարձրը և ցածրը և այլն: Նշված հասկացությունները կարող են ուղեկցվել դրական և բացասական՝ միմյանց նկատմամբ անիզոտրոպ էմոցիաներով: Մարդու հոգեկանի նորմալ գործունեության համար միմյանց նկատմամբ այդպիսի անիզոտրոպ էմոցիաները հոգեկանում (ամբողջում) պետք է ունենան համապատասխան որոշակի «տարածք»: Այդ մասին (քիչ այլ կերպ) ակնարկում էին Է. Բլեյլերը և Զ. Ֆրեյդը [7, 26, 27], [11, 22].

Հոգեկանը՝ որպես ամբողջություն, հանդիսանալով երկու կողմերի (որոնք ունեն անիզոտրոպ հարաբերություններ միմյանց նկատմամբ) միջև «տարածա-ժամանակային կոնտինուում», փորձում է կարգավորել էմոցիոնալ վիճակի նորմալ ընթացքը: Եթե այդ «տարածա-ժամանակային կոնտինուում» -ը փոքրանա (նեղանա) կամ մեծանա (լայնանա), ապա հոգեկանը դրան անհրաժեշտաբար կհակազդի. առաջին դեպքում, ամենայն հավանականությամբ, նևրոտիկ, պսիխոտիկ խանգարումների տեսքով՝ ընդհուպ մինչև հոգեկան համակարգի քայքայում, իսկ երկրորդ դեպքում, այն հանդես կգա անտարբերության, ապատիայի տեսքով և կրկին կարող է բերել հոգեկան համակարգի քայքայման: Ինչպես և մարդու կառուցվածքում (անատոմիայում), այս դեպքում ևս, անիզոտրոպ հարաբերությունները, ի դեմս էմոցիաների, հեշտ ուսումնասիրելի են, և հոգեկանի տարբեր խանգարումները փորձում են կարգավորել դրանց միջոցով (դրանց հետ գործ ունենալով): Սակայն այն ամբողջությունը, որում ներառված են անիզոտրոպ հարաբերությունները և որը դրսևորվում է դրանց միջև որպես «տարածա-ժամանակային կոնտինուում», մենք չենք կարողանում ֆիքսել և կարգավորել:

Դասական հոգեբանությունում այդ «տարածա-ժամանակային կոնտինուում»-ը հաճախ (եթե չասենք միշտ) հաշվի չի առնվել: Սակայն, ինչպես նշել էինք, հոգեկանի նորմալ (ներդաշնակ) գործունեության համար, այդ «տարածա-ժամանակային կոնտինուում» - ը որոշիչ դեր է խաղում: Փիլիսոփայության պատմության մեջ, հակադիր կողմերի (որոնք ստեղծում են անիզոտրոպ հարաբերություններ) միջև տարածության առավել ճշգրիտ բնութագիր տվել է Մ. Մամարդաշվիլին, այն անվանելով իբրև «Բացարձակ ճեղք»: Հեղինակը մեջբերելով Ռ. Դեկարտի խոսքերը գրում է. «… Մեծ անտարբերությունը, որը կա մեր և Աստծու մեջ՝ միայն որոշակի մի կետ է, որից հետո սկսում է ինչ-որ այլ բան: Այդ կետը ես կանվանեմ ինտենսիվության ֆիքսված կետ, որում ընկնելը շատ դժվար է» [8, 32, 33], սակայն որի մեջ, մեր կարծիքով, Ռ. Դեկարտը կարողացավ ընկնել:

Այժմ, մեր կողմից սահմանված տրինիտար սկզբունքը, ինչը դուրս բերվեց տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգից և խիստ կերպով գտնվում է այդ ուղղության տրամաբանության շրջանակներում, տեսնենք, թե որքանով է տեսանելի ժամանակակից որոշ հոգեթերապևտիկ ուղղությունների տեսական պատկերացումներում:

Է. Բերնի Տրանսակցիոն վերլուծությունում անձի կառուցվածքը մեկնաբանվում է երեք էգո-վիճակներով. «Ծնող», «Երեխա» և «Մեծահասակ»: Ամեն էգո-վիճակ իրենից ներկայացնում է մտածողության, վարքի և զգացմունքների յուրահատուկ պատերն:

Էգո-վիճակների նման բաժանումը հիմնված է հետևյալ երեք աքսիոմատիկ դրույթների վրա.

1. Ցանկացած մեծահասակ երբևէ եղել է երեխա: Այդ երեխան ցանկացած մարդու մեջ ներկայացվում է որպես «Երեխա» Էգո-վիճակ:

2. Նորմալ (կենսաբանական տարիքին համապատասխան) զարգացման մակարդակի ցանկացած մարդ ընդունակ է համարժեք կերպով գնահատել իրականությունը: Դրսից եկող տեղեկատվությունը կանոնակարգելու ընդունակությունը և գիտակից որոշումներ կայացնելը վերաբերում են «Մեծահասակի» Էգո-վիճակին:

3. Ցանկացած անհատ ունի կամ ունեցել է ծնողներ կամ դրանց փոխարինող անձինք: Ծնողական բնազդը ներմուծված է ամեն անհատի մեջ, որը դրսևորվում է իբրև «Ծնող» «Էգո-վիճակի» տեսքով [4, 20-34]:

Այս կերպ, տրանսակցիոն վերլուծությունում հոգեկանի կառուցվածքը ներկայացվում է յուրատիպ տրինիտար մոտեցման միջոցով, ինչը թույլ է տալիս այն ընդունել իբրև ամփոփ համակարգ:

Համաձայն Կ.Գ. Յունգի Անալիտիկ հոգեբանության, հոգեկանը կազմված է երեք առանձին՝ սակայն իրար հետ համագործակցող մասերից. «Էգո», «Անձնային անգիտակցական» և «Կոլեկտիվ անգիտակցական»:

1. Էգոն ներառում է իր մեջ մարդու գիտակցված վարքը, գործունեությունը, հարմարումը սոցիալական միջավայրին և կապը դրա հետ:

2. Անձնային անգիտակցականում առավելապես գտնվում են գիտակցության կողմից արտամղված չիրականացված հակումները, ցանկությունները: Դրանք կարող են ակտիվանալ և փորձել գիտակցություն ներխուժել որոշակի նպաստավոր պայմաններից ելնելով:

3. Կոլեկտիվ անգիտակցականն էվոլյուցիայի արդյունքում ստացված ժառանգություն է, որտեղ պահպանվում են անցյալի տպավորությունների, հիշողությունների հետքերը: Այն ընդհանուր է բոլոր մարդկանց համար և նույնիսկ, հնարավոր է՝ կենդանիների: Կոլեկտիվ անգիտակցականը անհատական հոգեկանի իրական բաղկացուցիչ մասն է [17, 175]:

Հոգեկանի կառուցվածքի Կ. Գ. Յունգի տրիադան տարբերվում էր Զ. Ֆրեյդի տրիադայից, սակայն այն ևս կարելի է համարել հոգեկանը որպես ամբողջական, ունիվերսալ կառուցվածք ներկայացնելու հաջողված փորձ:

Հոգեվերլուծությունում սկզբից Զ. Ֆրեյդն օգտագործում էր անձի տոպոգրաֆիկ մոդելը: Համաձայն դրա, հոգեկան կյանքում կարելի է ընդգծել երեք մակարդակներ. «Գիտակցական», «Ենթագիտակցական» և «Անգիտակցական»: 1) Գիտակցականի մակարդակում ներառված են այն հոգեկան գործառույթները, որոնց վերաբերյալ մենք հստակ պատկերա-

ցումներ ունենք: Գիտակցականը բնութագրվում է երկրորդային գործընթացով (ռացիոնալ մտածողություն, մոտեցում ռեալիզմի դիրքերից, իրականության սկզբունք): 2) Ենթագիտակցականի ոլորտը գլխավորապես կազմված է զգացումներից, հակումներից և ապրումներից, որոնք գիտակցվում են ժամանակի որոշակի պահին: 3) Անգիտակցականի մակարդակը բնորոշվում է առաջնային գործընթացներով և բնութագրվում է անժխտելիությամբ, անկախ է որևիցե ժամանակային կապերից, ինչպես նաև բնութագրվում է երևույթների խտացումով և շեղումներով (որը հատուկ է նաև երազների ստեղծման մեխանիզմներին): Զ. Ֆրեյդը, անգիտակցականը հաճախ անվանում է արտամղված: Անհաջող արտամղումը կարող է բերել նևրոտիկ ախտանիշների առաջացման: Անգիտակցականը նաև բնութագրվում է որպես չգիտակցված ցանկությունների և հակումների պահոց [15, 445 - 542]:

Սկսած 1920թ. – ից Զ. Ֆրեյդը վերանայեց և լրացրեց հոգեկանի տոպոգրոֆիկ մոդելը և հոգեկանի անատոմիայում ներմուծեց երեք հիմնական կառույցներ. «Իդ», «Էգո» և «Գեր-Էգո)» [16]: 1) Իդ-ն ամբողջությամբ գործում է անգիտակցականում և սերտ կապված է կենսաբանական բնազդային հակումների հետ (կերակուր, քուն, զուգավորում և այլն), որոնք լրացնում են մեր վարքի էներգիան: Համաձայն Զ. Ֆրեյդի, Իդ-ն ինչ-որ առեղծվածային, կենսաբանական, քաոսային բան է, ինչին հասու չեն մարդկային օրենքները և չի ենթարկվում դրանց: Իդ-ը, անհատի համար ամբողջ կյանքի ընթացքում պահում է իր կենտրոնական դերը: 2) Էգո-ն՝ հոգեկան ապարատի բաղկացուցիչ մասն է, որը պատասխանատու է կայացրած որոշումների համար: Էգո-ն ձգտում է արտաքին աշխարհի կողմից թելադրված սահմանափակումները հաշվի առնելով արտահայտել և բավարարել Իդ-ի ցանկությունները: Էգո-ն իր կազմվածքը և գործառույթները ստանում է Իդ-ից: Իդ-ից վերցնում է էներգիայի մի մասը, որպեսզի հոգա նրա կարիքները, որոնք պահանջվում են սոցիալական իրականության կողմից: Այդ կերպ, Էգո-ն ապահովում է օրգանիզմի անվտանգությունը և ինքնաապահովումը: Արտաքին սոցիալական աշխարհի դեմ պայքարի, ինչպես նաև Իդ-ի բնազդային պահանջները բավարարելիս Էգո-ն պետք է մշտապես իրականացնի հոգեկանում կատարվող իրադարձությունների և արտաքին աշխարհի իրական իրադարձությունների միջև ընտրություն: 3) Վերջին բաղկացուցիչ մասը, որը զարգանում է անձի մոտ, դա Գեր-Էգո-ն է: Գեր-Էգո-ն դա անձի անհատական տեսակետն է, որը ներառում է այն բոլոր բարոյական նորմերը, արժեքները և իդեալները, որոնք մենք ձեռք ենք բերել կյանքի ընթացքում: Դրանք մենք սովորում ենք ծնողներից և հասարակությունից, դրանց միջոցով հասկանում ենք, թե որն է «ճիշտ» և որը «սխալ»: Գեր-Էգո-

ն թելադրում է շրջանակներ, որոնցում մենք պետք է կայացնենք որոշումներ: Համաձայն Զ. Ֆրեյդի, Գեր-Էգո-ն սկսում է ի հայտ գալ մոտավորապես հինգ տարեկանից սկսած [6, 112-116]:

Վերոնշյալ տրինիտար մոդելը բաղկացած էր երկու անիզոտրոպ (Իդ և Գեր-Էգո) և դրանց նկատմամբ չեզոք (Էգո) հարաբերություններից, որը գտնվում էր այդ անիզոտրոպ հարաբերությունների միջև: Էգո-ի այդպիսի (չեզոք) առանձնահատկությունը թույլ է տալիս նշված անիզոտրոպ հարաբերություններին միևնույն համակարգում իրար հետ համագոյակցել և արդյունավետ գործել: Հոգեվերլուծությունում տարբեր բնույթի նևրոտիկ խնդիրները լուծելիս «չեզոք» Էգո-ն ակտիվ դերակատարություն ունի: Շնորհիվ Էգո-ի, երկու անիզոտրոպ հարաբերությունների միջև հաստատվում է հավասարակշռություն և համաձայնություն, որը թույլ է տալիս խուսափել տարատեսակ հոգեբանական խնդիրներից: Հոգեվերլուծությունում արտամղվածը հաղթահարելու համար կրկին դիմում են այդ «չեզոք» Էգո-ի օգնությանը (արտամղվածը գիտակցելու միջոցով այն սուբլիմացվում է և ենթարկվում ռացիոնալիզացիայի): Հոգեվերլուծությունում տարբեր բնույթի հոգեբանական խնդիրները լուծելիս Զ. Ֆրեյդն արդունավետ կերպով օգտագործում է Էգո-ի հնարավորությունները:

Չեզոք «տարրի» միջոցով հոգեբանական խնդիրները լուծելու, թերևս ամենավառ օրինակը կարող ենք գտնել Մ. Էրիքսոնի աշխատանքներում: Նա պատմում է, որ մանկական տարիքում, ոչ մեծ դիսլեքսիայի արդյունքում չէր կարողանում արտասանել «government» (կառավարություն) անգլերեն բառը: Նրա մոտ միշտ ստացվում էր «govement»: Ուսուցիչն ոչ մի կերպ չէր կարողանում սովորեցնել ճիշտ արտասանել այդ բառը: Մի անգամ, երիտասարդ ուսուցչուհին կիրառեց անսովոր մի մեթոդ: Դասարանում կար մի աշակերտ, որի ազգանունը La Verne – էր: Ուսուցչուհին խնդրում է Մ. Էրիքսոնին գրատախտակին գրել gouLa Vernement: Նա գրում է: Դրանից հետո նա Մ. Էրիքսոնին առաջարկում է կարդալ գրածը: Նա կարդում է: Ուսուցչուհին դրանից հետո խնդրում է, որ նա հեռացնի (ջնջի) ավելորդ La տառերը և Մ. Էրիքսոնը կարդում է դժվար արտասանվող բառը: Այդ ժամանակ, ինչպես վկայում է Մ. Էրիքսոնը, տեղի ունեցավ լույսի կուրացնող բռնկում, որը վերացրեց շրջակա օբյեկտները՝ ներառյալ գրատախտակը [5, 164]: Տարիներ հետո հեղինակը գրում է, որ այդ երիտասարդ ուսուցչուհուն նա պարտական է իր հիմնարար տեխնիկաներից մեկը. «Պաթոլոգիկ պատերնում ներմուծել անտեղի (irrelevant) և անսպասելի (unexpected) տարր, որը պայթեցնում է այն ներսից» [1, 102]:

Հոգեբանությունում վերոնշյալն այն բացառիկ օրինակներից է, որում ընդգծված կերպով բացահայտվում են, թե ինչպես և ինչպիսի մեծ ազդեցություն կարող է ունենալ «անկարևոր», «անտեղի» («չեզոք») տարրը

(նշված օրինակում բառը) մարդու հոգեկանի վրա՝ նույնիսկ այն դեպքում, երբ անզոր են եղած մեթոդները, որոնք հիմնականում գործ ունեն դրական և բացասական էմոցիաներ, զգացումներ արթնացնող հոգեբանական գործոնների հետ:

Ամփոփելով աշխատանքը կարևոր ենք համարում ընդգծել տրինիտար մոտեցման (սկզբունքի) կիրառելիության հնարավորությունների կարևորությունը և սահմանները.

- Տրինիտար մոտեցումը, թաքնված կամ բացահայտ կերպով, դրսևորվել է տարբեր գիտական դիսցիպլիններում առաջադրված խնդիրները բացատրելու և լուծելու ժամանակ (մաթեմատիկայում թվային ուղին նկարագրելիս՝ բացասական, դրական թվեր, որոնց մեջտեղում ընկած է զրոն, երկրաչափությունում, երբ նկարագրում են տարածական գծային չափումը, ֆիզիկայում մի շարք հիմնարար բանաձևեր ևս նկարագրվում են երեք բաղադրիչների միջոցով՝ E=mc2, և այլն):
- Հոգեբանությունում, հոգեկանի կառուցվածքը, մակարդակները նկարագրելիս, մի շարք ականավոր գիտնականներ (Զ. Ֆրեյդ, Կ. Յունգ, Է. Բերն և ուրիշներ) ցուցաբերում են տրինիտար մոտեցում, ինչն անուղղակի կերպով մատնանշում է այդ սկզբունքի ունիվերսալ լինելու փաստը:
- Հոգեթերապիայում, հոգեբանական խնդիրների ծագման պատճառները հասկանալու և հաղթահարելու համար, հեղինակավոր գիտնականները (Զ. Ֆրեյդ,Կ. Յունգ, Է. Բերն և ուրիշներ) փորձել են այն բացատրել տրինիտար սկզբունքով ձևավորված հոգեկանի բաղադրիչների միջև տարբեր «անհամաձայնությունների» միջոցով:
- Տրինիտար սկզբունքը դրսևորվելով տարբեր գիտական դիսցիպլիններում՝ խորքային խնդիրները լուծելու ժամանակ, կարող է դիտարկվել իբրև բնության հիմնարար, ունիվերսալ սկզբունքներից մեկը, ինչի ուսումնասիրումը թույլ կտա հոգեբանությունում, այդ թվում նաև հոգեթերապիայում, տարբեր տեսական և կիրառական խնդիրների բախվելիս դիմել նշված սկզբունքի օգնությանը:

Գրականություն

1. Erickson M.H. The Collected Papers of Milton H. Erickson on Hypnosis. Nature of Hypnosis and Suggestion – N.Y. 1980. Vol. 1. – 2647 p.
2. Naghdyan R.M. Metafizikakan hogebanutyan aknarkner. Yer., hrat. «Nairi», 2013. - 192 ej:
3. Баранцев Р.Г. Становление тринитарного мышления /. – Ижевск : РХД, 2005 . – 124 с.

4. Берн Э. Трансакционный анализ в психотерапии. М.: Эксмо, 2009. – 416 с.
5. Гинзбург М.Р., Яковлева Е.Л. Эриксоновский гипноз: систематический курс. – М.: Московский психолого-социальный институт, 2008. – 312 с.
6. Зиглер Д., Хьелл Л. Теории личности. – 3-е изд. – СПб.: Питер, 2009. – 607 с.
7. Лейбин В.М. «Словарь-справочник по психоанализу». / ст. «Амбивалентность». М.: АСТ, 2010. – 956 с.
8. Мамардашвили М. Картезианские размышления. М.: Изд. «Прогресс», 1993. – 352 с.
9. Миракян А.И. Основания трансцендентальной психологии восприятия. // А.И. Миракян и современная психология восприятия: Сборник материалов научной конференции (30 ноября 2010 г.) / Под общ. ред. Н.Л. Мориной, В.И. Панова, Г.В. Шуковой. - М.: УРАО «Психологический институт», 2010. С. 61-89.
10. Нагдян Р.М. Метафизический подход к методологии исследования психического отражения реальности. // Дисс. доктор. псих. наук. Ер., 2015. – 305 с.
11. Новейший философский словарь (гл. науч. ред. А.А. Грицанов) / ст. «Амбивалентность». Минск, 1999. - 896
12. Опрятная О.Н. Тринитарный подход как методологическое основание управления сложностью. Социология: методология, методы и математическое моделирование (Социология: 4М). 2005. № 21. С. 29-50.
13. Панов В.И. Экопсихология: Парадигмальный поиск. — М. ; СПб. : Психологический институт РАО; Нестор-История, 2014. — 304 с.
14. Принципы порождающего процесса восприятия. Под. ред. А.И. Миракяна. М., 1992.-223 с.
15. Фрейд З. Толкование сновидений. Мн.: ООО «Попурри», 2000. – 576 с.
16. Фрейд З. Я и Оно. Сборник, СПб.: изд. Азбука-классика, 2006. – 288 с.
17. Юнг К.Г. Структура и динамика психического. М.: «Когито-Центр», 2008. - 480 с.

Information about the authors

1. *Gor Yesayan-PhD of Psychology, Assosiate professor, Armenian State Pedagogical University, Armenia, g.s.yesayan@mail.ru*